



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Ս Ա Ր Դ ՈՒ Ի Ր Ա Վ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ի
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Ս**

002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 85 77, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.ombuds.am

12 նոյեմբերի 2010

Հայտարարություն

Նոյեմբերի 11-ին՝ առավոտյան 3 անց 54 րոպեին, ՄԻ պաշտպան Արմեն Հարությունյանի բջջային հեռախոսին է զանգում Նիկոլ Փաշինյանի կինը և հայտնում, որ իր ամուսնու վրա հարձակվել են դիմակավոր անձինք և վերջինս անհետացել է: Կինը չի ցանկանում Պաշտպանին ասել իրեն դեպքի մասին տեղեկացնողի ով լինելը:

Ա. Հարությունյանը հանձնարարում է ՄԻՊ արագ արձագանքման խմբի ղեկավարին ճշտել դեպքի մանրամասները: Խմբի ղեկավարին ՀՀ ԱՆ Կոշ ՔԿՀ-ից հայտնում են, որ ժամը 2 անց 30-ի սահմանում հերթապահները աղմուկ են լսել և մոտենալով՝ տեսել են, որ Ն. Փաշինյանի մահճակալի մոտ լույս է վառվում: Փաշինյանը ասել է, որ երկու դիմակավոր եկել և իրեն բռնության են ենթարկել: Նշենք, որ ՄԻՊ արագ արձագանքման խմբի ղեկավարի զանգի ընթացքում արդեն Ն. Փաշինյանը գտնվել է Կոշ ՔԿՀ-ի հերթապահ մասում:

Երեկ ողջ օրը, ՀՀ ՄԻՊ գրասենյակը պարբերաբար պահանջել և տեղեկատվություն է ստացել ՀՀ ԱՆ Կոշ ՔԿՀ-ի վարչակազմից: Այժմ Կոշ ՔԿՀ-ում շարունակվում է քննությունը:

ՄԻՊ գրասենյակը լրատվամիջոցներին երեկ պարզաբանուժներ է տվել միայն դատաբժշկական փորձաքննության արդյունքների վերաբերյալ, և ո՛չ հաստատել, ո՛չ էլ հերքել է հարձակման վերաբերյալ տեղեկատվությունը, քանի որ այն ի սկզբանե իրարամերժ էր:

Հայտնում ենք, որ եթե Ն. Փաշինյանը համաձայն չէ Առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից դատաբժշկական փորձաքննության տվյալների արդյունքներին, ապա ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պատրաստ է վերջինիս աջակցել այլ փորձաքննություն անցկացնելու հարցում:

Նշենք նաև, որ Ա. Հարությունյանը դեպքի մանրամասների վերաբերյալ հեռախոսազրույց է ունեցել ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի, ինչպես նաև Ն. Փաշինյանի փաստաբան Վահե Հովսեփյանի հետ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը անընդունելի է համարում մինչ պաշտոնական փորձաքննությունը հայտարարություններ անելը և կոչ է անում զերծ մնալ նման հայտարարություններից:

Կոչը հավասարապես ուղղված է ՀՀ ԱԺ պատգամավոր Զ. Փոստանջյանին և ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության հասարակայնության հետ կապերի բաժանմունքի պետ Ա. Բաբայանին, ովքեր նախքան փորձաքննության արդյունքների ստանալը հանդես էին եկել հայտարարություններով:

i»Õ»İ³ııáõÃÛ³Ý " Ñ³ë³ñ³j³ÛÝáõÃÛ³Ý
Ñ»ı İ³â»ñç μ³ÃÇÝ
Ñ»é. : 53 85 77

